
«ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 109 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ



Շրջակա միջավայրի վրա ազդեցության

նախնական գնահատման հայ

«Կարոշիննախագիծ» ՍՊԸ, տնօրեն

Ա. Կարապետյան

ԵՐԵՎԱՆ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ.....	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	7
2.1 Շրջակամիջակայքի վրաստորոշումը և գնահատման նպատակը.....	7
2.2 Շրջակամիջակայքի վրաստորոշումը և նախնական գնահատման հայտի հաշվետվումը և կազմը	8
2.3 Շրջակամիջակայքի վրաստորոշումը և նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը	8
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԿՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ.....	9
4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	12
4.1 Նախագծային և սեփնոլոգիական լուծումները.....	14
4.2 Տարածքի բարեկարգում և կանաչ ապաստամ.....	21
4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում.....	23
4.4 Ջեռուցում և օդափոխություն.....	24
4.5 Գազամատակարարում և էլեկտրամատակարարում.....	24
4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում.....	25
4.6.1 Ապահովագրության աշխատանքների կազմակերպում.....	26
4.6.2 Կառուցապատման աշխատանքների կազմակերպում.....	27
5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	30
5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը.....	30
5.2 Այլ սահմանափակումներ.....	32
5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրություն.....	32
5.4 Բնապահպանական հատկություններ և պատմական թաղի հուշարձաններ	32
5.5 Օդային աղակ.....	33
5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը.....	34

5.7	Ջրային ռեսուրսները.....	35
5.8	Բուսական աշխարհ.....	35
6	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	36
6.1	Շինարարության փուլ.....	36
6.1.1	Օդային ավազանի աղտոտվածության և մեղմացման միջոցառումները.....	36
6.1.2	Միջուկի և թրթռու մենթի աղղեցության և մեղմացում.....	38
6.1.3	Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրասաղղեցության և մեղմացում.....	39
6.1.4	Թափոնների առաջացում և կառավարում.....	41
6.1.5	Հողային համակարգերի վրասաղղեցության և մեղմացման միջոցառումներ.....	43
6.1.6	Աղղեցության և բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումներ.....	44
6.1.7	Մոցիպակային աղղեցության և նները և մեղմացում.....	45
6.1.8	Երթևեկության վրասաղղեցության և մեղմացման միջոցառումներ.....	46
6.1.9	Մշխատանքի անվտանգության և առողջության և.....	47
6.1.10	Հնարավոր սրտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումներ.....	47
6	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	49
6.1	Բնապահպանական աղղեցության և նները մեղմացնող միջոցառումներ.....	49
6.2	Մոնիթորինգ.....	52
7	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ.....	62
8	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	65
9	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	66
9.1	Հավելված 1. Նախագծման թույլ տվող և/ ճարտարափստահանակագծային առաջադրանք.....	66
9.2	Հավելված 2. Առաջին հարկի հատակագիծ.....	67
9.3	Հավելված 3. Երկրորդ հարկի հատակագիծ.....	68
9.4	Հավելված 4. Երրորդ հարկի հատակագիծ.....	69
9.5	Հավելված 5. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան.....	70
9.6	Հավելված 6. Շինարարական աշխատանքների իրականացման և մասնաշենքերի կառուցման հաջորդականության և նը.....	71
9.7	Հավելված 7. Անշարժ գույքի սեփականության վկայական.....	72
9.8	Հավելված 8. Ջրամատակարարման և ջրահեռացման սեփականական պայման.....	73
9.9	Հավելված 9. Գազաֆիկացման և գազամատակարարման սեփականական պայման.....	74

9.10	Հավելված 10. Էլ եկտրասնուն ցման սեխնիկական պպ մանի գրու թյ ու ն	75
9.11	Հավելված 11. Բնապահանական մեղմացնող միջոցառու մների մոնիտորինգի պ ան	76
9.12	Հավելված 12. Անանկիցների ցանկ.....	79

Հապավումներ

ԱԶԲ

Ասիական Զարգացման Բանկ

ԲՄԾ	Բնապահպանական միջոցառումների ծրագիր
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմեր
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՀՄԿ	Հիդրոօդերևութաբանության և մոխտորինգի կենտրոն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՔԿ	Քաղաքաշինության կոմիտե

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

Ծրագիրը	Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում
Ծրագրի նպատակը	Գործող նորմերին և չափանիշներին համապատասխանող սեյսմոկայուն դպրոցի կառուցում
Ծրագրի պատվիրատու	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Ծրագրի ֆինանսավորող	ՀՀ կառավարություն
Փորձաքննական գործընթացի ձեռնարկող	«Կարոշիննախագիծ» ՍՊԸ
Նախագծային ծառայություններ	«Կարոշիննախագիծ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ք. Երևան, Վաղարշյան փող.24/1, բն.43
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ	Էլ. փոստ՝ karokarapetyan58@mail.ru Հեռ.՝ (+374 94) 902 875
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Մարգարյան փողոց, 2-րդ նրբանցք, 14 շենք
Տարածքի ընդհանուր մակերեսը	0.80132 հա
Դպրոցի կառույցների կառուցապատման մակերեսը	2759.91 քմ
Դպրոցի նախագծային հզորությունը	350 աշակերտ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Երևան քաղաքի թիվ 109 ավագ դպրոցի կառուցման նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու): Նախագծային աշխատանքներն իրականացվել են «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ի կողմից՝ Պատվիրատուի կողմից ներկայացված նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի և ՀՀ գործող նորմատիվային պահանջների համաձայն:
2. Համաձայն ՀՀ-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի» Հոդված 14, կետ 6-ի, 1500 ք.մ-ից ավելի կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության կառույցները դասվում են «Գ» կատեգորիա և պահանջում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից գործունեության բնապահպանական պետական փորձաքննության իրականացում:
3. Երևան քաղաքում նախագծվող թիվ 109 ավագ դպրոցի կառույցի (ներառյալ՝ օժանդակ կառույցները՝ կաթսայատուն և էլ. ենթակայանը) կառուցապատման մակերեսը կազմում է 2759.91 ք. մ, ուստի պահանջվում է դպրոցի նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և ներկայացում ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն փորձագիտական եզրակացության ձեռք բերելու նպատակով:

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը

5. ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը

6. Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի և ՀԲ բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.
- նախագծվող դպրոցի աշխատանքային նախագիծը

- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը
- տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- շահագրգիռ կողմերի հետ քննարկումները

3 ՇՐՋԱՄԱՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԴՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

7. Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության

ուրտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

8. **ՀՀ Սահմանադրություն (2015).** 10-րդ հոդվածը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության վերարտադրության, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հոդված 8ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:
9. **ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, զննությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:
10. **ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:
11. **ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:
12. **ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:
13. **ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)**(Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում

բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառվումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

14. **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

15. **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

16. **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:

17. **ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30** «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» (23 հուլիսի 2009), որը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

Ուղեցույցներ և ստանդարտներ

18. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում

գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

19. **Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

20. Նախագծվող թիվ 109 ավագ դպրոցը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան փողոց 2-րդ նրբանցք 14 շենք հասցեում գործող համանուն՝ թիվ 109 ավագ դպրոցի տարածքում: Դպրոցի տարածքը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածում՝ Մարգարյան փողոցի 1-ին և 2-րդ նրբանցքների

– ՀՀ կառավարության որոշումները և քաղաքաշինության ոլորտում գործող իրավական նորմերի շրջանակը,

– թիվ 109 ավագ դպրոցի տնօրինության կողմից ներկայացված առաջարկությունները:

22. Ներկայացվող գործունեության ընթացքում դպրոցի գոյություն ունեցող շենքը, որը կառուցվել է 1970-ական թվականներին նախատեսվում է ապամոնտաժել, քանի որ շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցի շենքը (նստվածքներ և քարաթափություններ արտաքին պատերում, և այլն) չի բավարարում գործող նորմատիվային պահանջներին:

23. Նախագծվող թիվ 109 դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0.80132 հա: Ներկայացվող գործունեության ընթացքում դպրոցի շենքի կառուցապատման, տարածքի և կանաչապատ գոտիների բարեկարգման աշխատանքների շրջանակը կընդգրկի շուրջ 7 994.11 ք.մ տարածք, մասնավորապես՝ դպրոցի մասնաշենքերի և օժանդակ կառույցների կառուցապատման մակերեսը կկազմի 2759.91 ք.մ, կբարեկարգվի (ներառյալ՝ դպ. -ի բացօթյա մարզահրապարակը) և կկանաչապատվի 5234.22 ք.մ մակերեսով տարածք:

24. Դպրոցը նախագծվում է 350 աշակերտի համար, որի հատակագծային լուծումներում հաշվի են առնված դպրոցի ուսումնական մասնաշենքը, հանդիսությունների դահլիճը, մարզադահլիճը և բացօթյա մարզահրապարակը, դպրոցի գրադարանը և ճաշարանը, թանգարանը և նոր կառուցվող կաթսայատունը և այլ լուծումներ:

4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումները

25. 109 ավագ դպրոցի համալիրը նախագծվում է թվով երեք մասնաշենքերից՝ (I) հիմնական ուսումնական մասնաշենք, (II) գլխավոր մուտքի և սպասարկման մասնաշենք, (III) հանդիսությունների և մարզադահլիճի մասնաշենք: Մասնաշենքերը միմյանց միացված են հակասեյսմիկ կարերով: Դպրոցի գլխավոր հատակագիծը բերվում է Նկ. 2-ում:

26. Դպրոցի հիմնական *ուսումնական մասնաշենքը* հատակագծում ներկայացված է 15.5. 0 x 60. 0 մ առանցքային չափերով, եռահարկ է՝ 3մ հարկի բարձրությամբ, և ունի նկուղային հարկ՝ 2.4 մ հարկի բարձրությամբ: Մասնաշենքի առաջին և երկրորդ հարկերում են նախագծվում դպրոցի ուսումնական և անհատական պարապունքների սենյակները, տնօրենի սենյակը՝ կից ընդունարանով, ուսուցչանոցը և ուսմասվարի սենյակը: Երրորդ հարկում են նախագծվում ռազմագիտության սենյակը և զինանոցը: Մասնաշենքի հատակագծային լուծումներում հաշվի են առնված նաև ռեկրեացիոն գոտիները, միջանցքները, աստիճանավանդակները՝ դեպի դուրս ելքերով, սանհանգույցները՝ աշակերտների և ուսուցիչների համար:

27. Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժը ապահովող և այլ հարմարեցված լուծումներին: Այսպես օրինակ՝ մասնաշենքում հաշմանդամություն ունեցող երեխաների և այլ սակավաշարժ խմբերի համար նախատեսվում են վերելակ և թեքահարթակներ՝ արտաքին մուտքերում, ինչպես նաև հաշմանդամ երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ:

28. *Ուսումնական մասնաշենքի* տանիքը նախագծվում է հարթ՝ հարթ տանիքին բնորոշ դասական լուծումներով: Տանիքի աջ հատվածում տեղադրվելու է ֆոտովոլտային կայանը:

29. Դպրոցի *գլխավոր մուտքի և սպասարկման մասնաշենքը* հատակագծում ներկայացված է 18.0 x 21. 7 մ առանցքային չափերով, կից է հիմնական ուսումնական և հանդիսությունների և մարզադահլիճի մասնաշենքերին, երկհարկանի է՝ 3մ հարկի բարձրությամբ, և ունի նկուղային հարկ՝ 2.4 մ բարձրությամբ: Մասնաշենքի առաջին հարկում նախագծվում են դպրոցի ճաշարանը՝ կից խոհանոցով և պահեստներով, պահակի և էլ. վահանակի սենյակները: Մասնաշենքի երկրորդ հարկում տեղակայվել են դպրոցի թանգարանը և գրադարանը՝ իր գրապահոցով, իսկ այս հարկում նախատեսվող սրահի առաստաղին նախագծված/տեղակայված է ապակե երթիկ: Մասնաշենքի նկուղային հարկում են տեղադրվելու ճաշարանի օդափոխության համար նախատեսվող ներածման և արտածման ագրեգատները: Այս մասնաշենքի տանիքը ևս նախագծվում է հարթ՝ հարթ տանիքին բնորոշ դասական լուծումներով:

30. Դպրոցի երրորդ մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքը հատակագծում ներկայացված է, մագադահլիճը՝ 24 x 18.0 մ առանցքային չափերով, իսկ հանդիսությունների դահլիճը՝ 18.0 x 18.0 մ առանցքային չափերով: Մասնաշենքի կենտրոնական հատվածում նախագծվել է 6 մ լանությամբ սրահ/միջանցք, որը երկու դահլիճներն առանձնացնում է միմյանցից: Այս սրահի հատվածում ևս նախատեսվում է ապակե երթիկ, իսկ մասնաշենքի ծածկը սենդվիչ տեսակի պանելներով է: Մասնաշենքի նկուղային հարկում, որը ունի 1.8 մ բարձրություն տեղադրվելու են դահլիճների օդափոխության համար նախատեսվող ներածման և արտածման ագրեգատները:

31. Դպրոցի բոլոր մասնաշենքերում նախատեսվում են ինժեներական և տեխնիկական ժամանակակից սարքավորումներ:

32. Դպրոցի արտաքին դռները նախատեսվում են ալյումինե ջերմամեկուսիչ կամրջակով և ապակեփաթեթով, իսկ ներքին դռները՝ մետաղապլաստե և մետաղե: Կիրականացվեն մետաղեպլաստե պատուհաններ և նախատեսվում են պատուհանի մետաղեպլաստի գույնից (30 մմ հաստությամբ) և պլաստիկից պատուհանագոգեր: Դպրոցում կտեղադրվեն ապակեպատ մետաղեպլաստե և ալյումինե վիտրաժներ:

33. Ներքին հարդարման լուծումներում, մասնավորապես՝ ներքին պատերի հարդարումը նախատեսվում է բարձրորակ գաջե սվաղից, որի վրա կիրականցվի լատեքսային ներկվածք: Սանհանգույցներում նախատեսվում է հախճասալերով երեսպատում՝ ցեմենտավազային շաղախի վրա և կիրականացվեն կախովի առաստաղներ: Հանդիսությունների դահլիճի առաստաղն ամբողջ մակերևույթով կիրականցվի գիպսաստվարաթղթե սալերով: Ներքին հարդարման աշխատանքներուն բացառապես կօգտագործվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութեր:

34. Հատակների լուծումներում, մասնավորապես՝ միջանցքներում, աստիճանավանդակներում և հարթակներում կիրականացվեն արհեստական գրանիտե հատակներ, սանհանգույցներում՝ խեցեսալե, իսկ դահլիճներում՝ վինիլային և կավրոլիտե հատակներ, մնացած սենյակներում՝ լամինատե հատակներին նմանվող վինիլային հատկներ:

35. Արտաքին հարդարման լուծումներում՝ բոլոր արտաքին պատերը կջերմամեկուսացվեն հանքային բամբակով, որի վրա կիրանկացվի մետաղական ցանց, որն էլ կսվաղվի ցեմենտ/ավազային շաղախով: Սվաղը կծածկվի ճակատային քսամածով և կներկվի ճակատային բարձրորակ ներկերով: Արտաքին պատերի մնացած լուծումներում կիրականացվի երեսպատում՝ ֆիբրոցեմենտային և տուֆե սալիկներով:

36. Դպրոցի բոլոր մասնաշենքերում նախատեսված են առանձին մուտքեր: Մուտքերի տեղադիրքերի ընտրությունն իրականացված է այնպես, որ դպրոցի համալիրն ամեն ուղղությամբ կունենա եվակուացիոն ելքեր:

37. Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների շրջանակում նախատեսվում է բոլոր արտաքին պատերի, տանիքների ջերմամեկուսացման աշխատանքներ:

38. Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից, բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ դպրոցի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ:

39. Նախագծված դպրոցի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1.-ում:

40. Դպրոցին կից նախատեսվում է կառուցել 22.85 ք.մ մակերեսով կաթսայատուն: Կաթսայատունը նախագծվում է որպես ե/բ սյունահեծանային միահարկ կառույց: Դպրոցի հին գործող կաթսայատունը նախատեսվում է պահպանել, քանի որ վերջինս համատեղ օգտագործվում է դպրոցի հարևանությամբ գործող թիվ 138 դպրոցի հետ: Նոր կառուցվող կաթսայատունը կծառայի միայն նախագծվող թիվ 109 ավագ դպրոցին:

41. Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է գոյություն ունեցող (ՏԵ 809) էլեկտրական ենթակայանի, որը գտնվում է նոր մասնաշենքերի մուտքային հատվածում, ապամոնտաժում և նոր 21.00 ք.մ մակերեսով և 250 կՎտ հզորությամբ ենթակայանի կառուցում: Վերջինս կսպասարկի տեղանքում առկա երկու (թ. 138 և թ. 109) դպրոցներին: Ենթակայանի շենքը դպրոցի հատակագծում ներկայացված է 6.40 x 4.0 մ առանցքային

չափերով, միահարկ, տուֆե քարաշար (40 սմ) կառույց, հիմքերը, միջուկները և ծածկերը՝ երկաթ/բետոնից:

42. Նախագծվող դպրոցի տարածքում՝ բացառությամբ բնակիչների կողմից օգտագործվող տարանցիկ հատվածում (ըստ նախագծային առաջադրանքի), նախատեսվում է նոր պողպատե տուփաձև խողովակներից ցանկապատի իրականացում, իսկ դպրոցի բացօթյա մարզահրապարակի պարագծով՝ մետաղական ցանցե ցանկապատ:

43. Դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները՝ ըստ տրամադրված տեխնիկական պայմանների:

Աղ. 1 Ներկայացվող գործունեության հիմնական տեխնիկատնտեսական ցանցի ներքին:

ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Ընդհանուր հողատարածքի մակ.	հա	0.80132
Մասնաշենքերի թիվը	հատ	3
Մասնաշենքերի կառուցապատման մակ.	ք.մ	2716.06
Դպրոցի նախագծվող տարողունակությունը	աշակերտ	350
Մեկ աշակերտին հատկացվող մակ.	ք.մ	2.87
Ուսումնական սենյակների թիվը	հատ	18
Ուսումնական սենյակների մակ.	ք.մ	1006.12
Բացօթյա մարզահրապարակ	հատ	1
Թեթև ատլետիկայի հրապարակ	հատ	1
Թեթև ատլետիկայի հրապարակ	ք.մ	840.90
Հիմնական սենյակների մակերեսը		
Հանդիսությունների դահլիճ	ք.մ	204.92
Մարզադահլիճ	ք.մ	419.14
Ուսուցչանոց	ք.մ	43.32
Բուժկետ	ք.մ	28.58
Գրադարան	ք.մ	83.69
Ճաշարան	ք.մ	121.00
Թանգարան		101.39
Բարեկարգման աշխատանքներ		
Ասֆալտապատման գոտու մակ.	ք.մ	2469.32
Կանաչապատման գոտու մակ.	ք.մ	1503.10
Մուտքի բետոնե սալարկում	ք.մ	195.0
Բացօթյա մարզահրապարակ	ք.մ	1066.80
Ինժեներական ցանցեր		
Էլ. ենթակայանի մակ.	ք.մ	21.00
Էլ. սնուցում	կՎտ-ժամ	160.00
Ջրամատակարարում	լ/վրկ	2.96
Հակահրդեհային	լ/վրկ	5
Կոյուղի	լ/վրկ	2.96
Ջեռուցում		
Կաթսայատան մակերես	ք.մ	22.85
Կաթսաների քանակ	հատ	2
Կաթսաների պահանջվող հզորություն	կվտ-ժամ	842.00
Տաք ջրամատակարարում		
Արևային ջրատաքացուցիչ	հատ	60.00
Արևային էլեկտրաէներգիայի մատակարարում		
Արևային վահանակ (56 մոնոբյուրեղ)	կվտ	22.4

Նկ. 2 Երևանի թիվ 109 ավագ դպրոցի գլխավոր հատակագիծը:

44. Տարածքի *բարեկարգման աշխատանքների* շրջանակում նախատեսվում է իրականացնել դպրոցի տարածքի ազատ և երթևեկելի գոտիների, մայրերի, ինչպես նաև բացօթյա թեթև ատլետիկայի հրապարակի (840.90 ք. մ) ասֆալտե ծածկույթի իրականացում: Ասֆալտապատման աշխատանքների ընդհանուր մակերեսը կկազմի 2469.32 ք.մ: Դպրոցի մուտքի հատվածում նախատեսվում է բետոնե սալիներով սալարկման աշխատանքներ շուրջ 195.0 ք. մ: Դպրոցի բացօթյա մարզահրապարակի ծածկույթը (1066.8 ք. մ) նախատեսվում է իրականացնել արհեստական կանաչով:

45. Տարածքի *կանաչապատման աշխատանքների* շրջանակում դպրոցի տարածքը կհամալրվի թվով 69 արժեքավոր ծառատեսակներով, մասնավորապես՝ նախատեսվում է տնկել սոճիներ (8 հատ), եղևնիներ (7 հատ), գնդաձև ակացիաներ (7 հատ), հուդայածառեր (26 հատ), սապոնաձառ (8 հատ), կատալպա (7 հատ) և ձիակասկ (8 հատ): Ծառատեսակների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով նշված տեսակների Երևան քաղաքի բնակլիմայական պայմաններին հարմարվելու գործոնը և Երևանի քաղաքապետարանի կողմից արված առաջարկությունները: Աշխատանքները կընդգրկեն նաև 1496 ք. մ մակերեսով սիզամարգերի իրականացում և 50 ք. մ թփապատման աշխատանքներ սամշիտով՝ կանաչապատ գոտիների եզրային հատվածներում: Ընդհանուր առմամբ կանաչապատ գոտու հատակագծային մակերեսը կկազմի 1 503.10 ք. մ: Դպրոցի տարածքի *«Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագիծը»* համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ և ներկայացվում է սույն հատին կից:

46. Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի նախագծվող ոռոգման ցանցի միջոցով, որը նախատեսվում է միացնել տարածքի մոտակայքով անցնող քաղաքային ոռոգման ջրագծին: Նախագծվող ոռոգման համակարգը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե DN50 (63x5.8), DN32 (40x3.0) խողովակներից, ոռոգման ծորակների և ռետինե խողովակների միջոցով: Աշնան ամիսներին առաջարկվում է տարածքի ամենացածր կետում նախատեսված ոռոգման ծորակից դատարկել համակարգում առկա ջուրը՝ ձմռան ամիսներին ջուրը խողովակներում սառչելուց խուսափելու նպատակով:

4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

47. Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված (22/12/2019թ.) նախագծման տեխնիկական թիվ ԱՄ-772 պայմանի (Հավելված 8) համաձայն, մասնավորապես՝ դպրոցի ջրամատակարարման գործընթացը կկազմակերպվի Մարգարյան 1-ին նրբանցքով անցնող $d=150$ մմ համայնքային ջրագծից:

48. Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի հեռացումը՝ ըստ տեխնիկական պայմանի, նախատեսվում է իրականացնել Մարգարյան 2-րդ նրբանցքով անցնող $d=300$ մմ կոյուղագծից:

49. Տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերն որոշվել են հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը հաշվարկվում է $Q_{\max}/վրկ=2.96$ լ/վրկ, իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝ 5.0 լ/վրկ:

50. Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել տանիքում տեղադրվող արևային ջրատաքացուցիչների (30 կոլբայով 2 կոլեկտոր) միջոցով, որտեղ որպես ջերմատար կօգտագործվի գլիուկոն: Ջերմատարի շրջանառությունը կիրականացվի ավտոմատ կառավարման համակարգին միացող պոմպային ագրեգատով և ճնշումային բակում տեղադրվող ջերմափոխանակիչի միջոցով, որը և կտաքացնի տաք ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Արևի բացակայության ժամանակ, երբ բաքում կդիտվի ջերմաստիճանի նվազում, նախատեսվում է ավտոմատ կերպով միացող էլեկտրատաքացուցիչ:

51. Նախագծվող դպրոցի տարածքից մակերևութային ջրերի հեռացումը նախատեսվում է իրականացնել ինքնահոս եղանակով՝ տարածքի բնական և նախագծային լուծումներով նախատեսվող թեքությունների հաշվին, դեպի տարածքի կանաչ գոտիներ և մատակա հեղեղատար:

4.4 Ջեռուցում և օդափոխություն

52. Նախագծվող դպրոցի ջեռուցման գործընթացը կկազմակերպվի նորակառույց կաթսայատան միջոցով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի «ECOMAX» ֆիրմայի 421 կվտ/ժամ հզորության ջրային երկու կաթսաների (տես Աղ. 1) միջոցով բնական գազի այրմամբ: Կաթսայատան հարևանությամբ նախատեսում է պահուստային հեղուկ վառելիքի ռեզերվուար՝ 10 իւ.մ տարողությամբ:

53. Կաթսայատան ջուրն օգտագործվելու է ջրաջեռուցիչ կաթսաների և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում:

54. Դպրոցի հանդիսությունների դահլիճի, մարզադահլիճի, պարասրահի և ճաշարանի համար նախատեսված են մեխանիկական դրդմամբ օդափոխության ներածման և արտածման կոմպակտ համակարգեր: Օդափոխության ներածման սարքերը տեղադրվելու են նկուղային հարկերում հատակի վրա, իսկ արտածման սարքերը՝ տանիքում: Օդի ներածումը և արտածումն կիրականացվի կարգավորվող ճաղավանդակների միջոցով, կօգտագործվեն ցինկապատ օդատարեր, իսկ բոլոր օդատարերը կջերմամեկուսացվեն:

4.5 Գազամատակարարում և էլեկտրասնուցում

55. Նորակառույց դպրոցի գազաֆիկացման գործընթացը կկազմակերպվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի (18/12/2019թ.) համաձայն, այն է՝ դպրոցի տարածքով անցնող միջին ճնշման d=108մմ տրամագծով գազատարից (Հավելված 9):

56. Նախագծվող դպրոցի և տարածքի էլեկտրամատակարարման համար նախատեսվում է դպրոցի տարածքում գործող SE-0809 տրանսֆորմատորային ենթակայանի տեղափոխում և վերահատակագծում դպրոցի տարածքում՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված N05-

ԴԳ-02/281 տեխնիկական գրության, միաժամանակ ավելացնելով 60 կՎա հզորություն (ընդհանուր 160 ԿՎԱ), իսկ դպրոցի միացումը և սնուցումը ՏԵ-0809 160/10ԿՎ ենթակայանից կիրականացվի կառուցելով ստորգետնյա մալուխային գծեր (մոտ 20մ երկարությամբ):

4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում

57. Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում կիրականցվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքները: Շինհրապարակի կազմակերպման աշխատանքները կիրականացվեն բացառապես դպրոցի տարածքի վարչական սահմանների ներսում:

58. Շինարարական հրապարակի կազմակերպման պլանը բերվում է *հավելված 5. -ում*, որտեղ հաշվի են առնված ըստ գործող նորմերի պահանջվող միջոցառումները, մասնավորապես՝

- դպրոցի տարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատումը
- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքներ՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, բիոզուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները
- տարածքով հետիոտների անցման ուղիները և շինարարական մեքենասարքավորումների հրապարակին մոտեցման և տեղաշարժի ուղղությունները:

59. Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և միացման աշխատանքները՝ գոյություն ունեցող կոմունիկացիաներին:
60. Շինարարական հրապարակում *աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման* ուղղված միջոցառումների համալիրը ներկայացված է ԲՄԾ-ի (Աղ.4) *Աշխատանքի և առողջության պահպանման պլանում*:

4.6.1 Ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում

61. Գոյություն ունեցող դպրոցի ապամոնտաժման աշխատանքները՝ ըստ ապամոնտաժման աշխատանքների նախագծի նախատեսվում է իրականացնել դպրոցի մասնաշենքերի (թվով 3) հաջորդաբար ապամոնտաժմամբ: Սկզբում կիրականացվեն 2-րդ, հետո 3-րդ մասնաշենքերի ապամոնտաժումը և վերջում 1-ին հիմնական մասնաշենքի ապամոնտաժման գործողությունները, քանի որ նշված մասնաշենքում կկազմակերպվեն դպրոցի դասերը: Ապամոնտաժման գործողությունների ընդհանուր տևողությունը հաշվարկվում է 8.5 ամիս, ներառյալ նախաշինարարական աշխատանքները, որի ժամանակացույցը ներկայացված է Աղ 2-ում:
62. Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ և կբացառվեն այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Հաջորդաբար կապամոնտաժվեն մասնաշենքերի ներքին և արտաքին դռները, պատուհանները և ապա կիրականացվեն միջնորմերի, հատակների, տանիքի, սալերի, հեծանների և պատերի, սյուների ապամոնտաժումը:
63. Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինարարական նյութեր, կտեղափոխվեն շինարարական կապալառուի պահեստ և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից՝ այլ շինարարական աշխատանքներում, իսկ գոյացած շինարարական աղբի ծավալը, որը

գնահատվում է մոտ 207.70 խ.մ, կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր (Ն2391-Ա, 2016թ. հունիսի 30):

4.6.2 Կառուցապատման աշխատանքների կազմակերպում

64. Նախագծվող դպրոցի շին աշխատանքները, համաձայն դպրոցի շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի, առաջարկվում է իրականացնել հետևյալ հերթականությամբ, սկզբում իրականացնել 1ա, հետո 1գ, իսկ վերջում 1բ մասնաշենքի և մնացած օժանդակ կառույցների կառուցման գործողությունները՝ հաշվի առնելով շինարարական հրապարակի տարածքի սահմանափակ լինելը, ավտոկոռունկի տեղակայումը և աշխատանքները մասնաշենքերի երկու կողմերից կազմակերպելու հնարավորությունը: Մասնաշենքերի կառուցման աշխատանքները՝ ըստ կազմակերպման նախագծի, կիրականացվեն ապամոնտաժման աշխատանքների հետ միաժամանակ:

65. Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ստորև բերվող ծավալի հողային աշխատանքները.

- հողային հանույթ՝ 4000 խ. մ
- հետ լիցք՝ 1 750 խ. մ
- հեռացվող/տեղափոխվող գրունտ՝ 2 250 խ. մ:

66. Շինաշխատանքների իրականացումը կիրականացվի մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից: Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն:

67. Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շինարարության

ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից: Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի առկա էլ. ենթակայանից: Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստերից, իսկ խտացրած օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից (ՁԻՖ-55 մակնիշի):

68. Կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով Երևան քաղաքին մոտ բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը:
69. Հրապարակում սորոն նյութերը (ավագ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն)՝ հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:
70. Շինարարական աշխատուժի առավելագույն թիվը գնահատվում է 33 մարդ, որից ինժեներական կազմը՝ 2 մարդ և ծառայողական աշխատողներ՝ 1 մարդ:
71. Շինարարության նորմատիվ ժամկետն հաշվարկվել է 30.5 ամիս կամ 2.5 տարի (Աղ. 2), ներառյալ՝ հրապարակի նախապատրաստման գործողությունները (մոտ 15օր):

Աղ. 2 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

hh	² ß³ ĩ ³ ÝŸ»ñÇ³ Ýĩ³ ÝáðÜ	Միավորը	Տնողությունը	Ի ÆÜ² ð² ð àð Â Ú² Ü		
				Տարի		
				I	II	III
1	2	3	4	5	6	7
1	Ապամոնտաժման աշխատանքներ	ամիս/տարի	8.5/ 0.7			
2	Մասնաշենքերի կառուցման սկիզբը կարելի է համատեղել ապամոնտաժվող 1 մասնաշենքի աշխատանքների հետ/	ամիս/տարի	30.5/ 2.5			

5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

72. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հյուսիս-արևմտյան հատվածում գործող թիվ 109 ավագ դպրոցի տարածքում:

73. *Գեոմորֆոլոգիական տեսակետից* բնութագրվող տարածքը գտնվում է Եղվարդի հրաբխային սարավանդի հարավ-արևմտյան մասում, Էռզիոնա-հողմնահարման լանջերի վրա: Տեղանքի մակերեսը հիմնականում հարթ է, բացարձակ նիշերի տարբերությունը տատանվում են 1095.0-1099.5 մ-ի սահմաններում:

74. *Հիդրոերկրաբանական տեսակետից*, քանի որ հրաբխային կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ և ծակոտկենությամբ, ուստի դրանց բնորոշ է բարձր ջրատարությունը, և բնութագրվող տարածքում հիմնականում տարածված են միջլավային և լավատակի ջրերի տեսակները: Ուսումնասիրությունների արդյունքում բնութագրվող տեղանքում գրունտային ջրերը *մինչև 12.0 մ խորություններում չեն հայտնաբերվել*: Ըստ գրականական աղբյուրների՝ գրունտային ջրերը գտնվում են 50 մ և ավելի խորը հորիզոններում:

75. Տեղանքի *երկրաբանա-լիթոլոգիական* կառուցվածքը, համաձայն իրականացված ուսումնասիրությունների և գոյություն ունեցող գրական տվյալների, վերնից-ներքև ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով.

Շերտ – 1 Ասֆալտե շերտ՝ խճա-մանրախճային կազմի նախապատրաստական շերտի վրա, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.01-0.2 մ, *տեխնածին առաջացումներ*:

Շերտ – 2 Հումուսային շերտ՝ խճա-մանրախճային կազմի, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.15-0.2 մ, *տեխնածին առաջացումներ*:

- Շերտ – 3 Լիցքային գրունտ՝ չպատկապանդված, խճա-մանրախճային կազմի, ավազակավային նյութի խառնուրդը մինչև 30%, երբեմն նկատվել են շինարարական և կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.5-7.6 մ, *տեխնածին առաջացումներ:*
- Շերտ – 4 Խճա-մանրախճային գրունտ՝ մեծաբեկորներով, բազալտային անդեզիտից, կավավազային և հրաբխային ավազային լցանյութով մինչև 20-30%, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.5-4.0 մ, *չորրորդային հասակի էյուվիալ առաջացումներ:*
- Շերտ – 5 Հողմնահարման կեղև՝ խճա-մանրախճային կազմի, մեծաբեկորներով, հրաբխային ապարներից, կարբոնատացված կավավազա-ավազակավային և լյուսային լցանյութը մինչև 30-35%, գրունտը թույլ ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը՝ համատարած, հզորությունը՝ 3.0-7.0 մ, *չորրորդային հասակի էյուվիալ առաջացումներ:*
- Շերտ – 6 Բազալտային անդեզիտի բաց մոխրագույն ենթաշերտեր՝ ճեղքավորված, ծակոտկեն, տարածումը՝ համատարած, հզորությունը՝ 1.0-2.0 մ, *չորրորդային հասակի հրաբխային առաջացումներ:*
- Շերտ – 7 Բազալտային անդեզիտ՝ բաց մոխրագույն, զանգվածային, ամուր, արմատական տեղադրմամբ, ծակոտկեն, մասամբ ճեղքավորված, տարածումը համատարած է, հզորությունը՝ 3.0 մ-ից ավել, *չորրորդային հասակի հրաբխային առաջացումներ:*
76. *Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները* գնահատվում են բարենպաստ նախագծվող դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):

5.2 Սեյսմիկ բնութագրերը

77. Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, բնութագրվող տեղամասը գտնվում է սեյսմիկ *երրորդ գոտում*, գրունտների հնարավոր արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max}=0.4g$ և ունի *9 և ավելի* բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների:

5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

78. Բնութագրվող տարածքին բնորոշ է չորային կլիման՝ ըստ ՀՀ շինարարական կլիմայաբանության (ՀՀՇՆ II-7.01-2011): Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը տեղանքում կազմում է $+40^{\circ}\text{C}$, իսկ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -30°C : Քամու միջին արագությունը կազմում է 3 մ/վրկ, գերակշռում են հյուսիսային (հունվար) և հյուսիս-արևելյան (հունիս) ուղղության քամիները: Տարեկան մթնոլորտային տեղումների միջին քանակը կազմում է 306 մմ: Չյան ծածկույթի հաստությունը կարող է հասնել 50 սմ-ի: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 75 սմ:

5.4 Բնապահպանական հատուկ տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ

79. Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:


5.5 Օդային ավազան


80. Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Համաձայն ՀՄԿ-ի 2019 թվականի տարեկան հաշվետվության՝ Երևան քաղաքում ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են 0.005 մգ/մ^3 տիրույթում և չեն գերազանցել նշված աղտոտիչների գործող սահմանային թույլտրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ) ($\text{ՍԹԿ}_{\text{NO}_2} = 0.04 \text{ մգ/մ}^3$, $\text{ՍԹԿ}_{\text{SO}_2} = 0.05 \text{ մգ/մ}^3$):

81. Երևան քաղաքում ընդհանուր փոշու միջին տարեկան և ամսական կոնցենտրացիաները 2020 թ.-ին եւս չեն գերազանցել ՍԹԿ-ները ($\text{ՍԹԿ}_{\text{PM}} = 0.015 \text{ մգ/մ}^3$), սակայն քաղաքի որոշ հատվածներում՝ հիմնականում Կենտրոն վարչական շրջանում, ընդհանուր փոշու մասնիկների կոնցենտրացիաներն որոշ օրերի գերազանցել են ՍԹԿ-ն:

82. Նկ. 3-ում ներկայացված են մթնոլորտային օդում 2020 թվականի հունվարի-փետրվար ամիսներին առաջնային աղտոտիչների չափված կոնցենտրացիաները, որոնք դիտվել են ՍԹԿ-ների տիրույթում: Բացառություն են կազմել փոշու ընդհանուր մասնիկների մակարդակները, որոնց չափաքանակներն ենթարկվել են 81 պարագրաֆում նկարագրված օրինաչափություններին:

Նկ. 3 Երևան քաղաքում մթնոլորտային օդում առաջնային աղտոտիչների կոնցենտրացիաները 2020 թվականի հունվար- փետրվար ամիսներին:





5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը

83. Կառուցապատվող տարածքը հանդիսանում է Երևանի թիվ 109 ավագ դպրոցին անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով (պետական գրանցման No 03Ա057189 վկայական) տրամադրված գույք: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը բերված է Հավելված 7-ում:

84. Կառուցապատվող տարածքում ձեռնարկատիրական որևէ գործունեություն չի իրականացվում և հողատարածքն ամբողջությամբ օգտագործվում է դպրոցի կողմից:

85. Բնութագրվող տեղամասը տարածքի յուրացված հատվածներում ներկայացված է ասֆալտե ծածկույթի տեսքով, իսկ մնացած հատվածները զբաղեցնում են կանաչ գոտիները:

5.7 Ջրային ռեսուրսները

86. Բնութագրվող տարածքում և մերձակայքում չկան մակերևութային ջրային մարմիններ կամ առուներ: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող տարածքում գրունտային ջրերը չեն հայտնաբերվել մինչև 12.0 մ խորություններում:

5.8 Բուսական աշխարհ

87. Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները:

88. Դպրոցի տարածքում հիմնականում մասնաշենքերին զուգահեռ հատվածներում աճում են տարբեր տարիքի ծառատեսակներ և թփեր:

89. Կանաչապատ գոտու ոռոգումն իրականացվում է ավանդական եղանակով, այն է՝ դպրոցի աշխատակիցների ուժերով, սակայն գործունեության տեղանքով անցնում է քաղաքային ոռոգման ջրատար:

6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

90. Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և հնարավոր ռիսկերը գնահատվում են գործող դպրոցի մասնաշենքերի ապամոնտաժման և նոր դպրոցի շենքի կառուցման աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ գործունեության ընթացքում հիմնականում գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շինարարական գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով գործունեության տարածքը:

91. Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի կառուցապատման աշխատանքների ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը:

6.1 Շինարարության փուլ

6.1.1 Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները

92. Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ q/վ}$$

որտեղ՝

K₁ –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K₂ –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K₃ –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 3

K₄ –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K₅ –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K₆ –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների ընդհանուր տևողությունը գնահատվում է մոտ 3.8 ամիս կամ

3.5 ամիս x 22 օր x 8 ժամ = 669 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը հաշվարկվում 4 000 իւ . մ կամ 6 400 տոննա:

6 400 տոննա /669 ժամ = 15.31 տ/ժ

Այսպիսով՝

$Q = (0.05 \times 0.02 \times 3 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 15.31 \times 10^6) / 3600 = 0.306$ գ/վ կամ

գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$0.306 \text{ գ/վ} \times 669 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.737 \text{ տ}$

93. Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի դպրոցի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և դրանց արագ գրավիմետրիկ նստելու հատկությունը: Նշված արտանետումները չեն

գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես՝

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանման և փոշենստեցման գործողություններ,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ,
- փոշի առաջացնող նյութերը (ավագ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

94. Օդային ավազանի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ցանկը ներկայացվում է բնապահպանական մեղմացնող միջոցառումների պլանում՝ Աղյուսակ 4. -
ն ւ մ (տես 2 ե ն թ աբ ա ժ ի ն , «Շրջակա միջավայրի պահպանության պլան»՝
Մթնոլորտային օդի աղտոտում և փոշու կառավարում :

6.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում

95. Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակներ գնահատվում են գործող դպրոցի շենքի քանդման գործողությունների ընթացքում, սակայն հաշվի առնելով այն, որ ամբողջովին քանդումը նախատեսվում է իրականացնել ապամոնտաժման եղանակով՝ բացառելով խոշոր տեխնիկայի կիրառումը, ապա աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը:

96. Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում:

Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին և դպրոցների դասերի ավարտից հետո, այն է՝ ժամը 14:00-ից 18:00:

97. Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիքների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով հարևան ազդակակիքների հեռավորությունը դպրոցի տարածքից (≥ 10 մ):

98. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

99. Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են Աղյուսակ 4. -ում (տես 2 ենթաբաժին, «Շրջակա միջավայրի պահպանության պլան»՝ Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացում

100. Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

101. Դպրոցի մասնաշենքերի ապամոնտաժման և նոր շենքի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

102. *Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.*

$$V = S \times K \times T \times K_1$$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ 5 234.22ք. մ

K – 1 մ² օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 մ³,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝ 22 օր x (30.5 -7 (նոյեմբեր-մայիս) x 2 ամիս)= 363 օր

K₁- ջրցանի օրական քանակը՝ 1

Այսպիսով՝ $V = 5\,234.22 \times 0.0015 \times 363 = 2\,850$ մ³/շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 2 850 մ³:

103. *Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.*

$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$

որտեղ՝

n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է՝ 3 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 մ³,

n₁ - բանվորների թիվն է՝ միջին 30 մարդ

N₁ - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 մ³/մարդ օր

T-աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում ամբողջ շինարարության ժամանակ՝ 22 օր x 30.5 ամիս= 671 օր :

Այսպիսով՝ $W = (3 \times 0.016 + 30 \times 0.025) \times 671 = 535.5$ մ³ / շինարարություն ժամանակ կամ 0.798 մ³/օրական:

104. Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի դպրոցի տարածքին կից անցնող համայնքային ջրագծից:

105. Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ չըլային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ տեղամասին կից չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ: Անուղղակի ազդեցություններ չըլային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը

կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները:

106. Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում՝ հաշվի առնելով դրանց բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից: Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա (≥5 խ. մ տարողությամբ), որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

6.1.4 Թափոնների առաջացում և կառավարում

107. Շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ դպրոցի շենքի ապամոնտաժումից և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են IV դասի վտանգավորությամբ շին թափոնների առաջացում, ինչպես նաև գնահատվում են բանեցված շարժիչային յուղերի և կենցաղային թափոններ՝ ստորև ներկայացվող տեսակային կազմով և բնութագրերով.

Թափոնի անվանումը	Ծածկագիրը	Վտանգավորության դասը
«Շենքերի քանդումից առաջացած շին աղբ»	91200601 01 00 4	IV
«Շինարարության փայտանյութի թափոններ»	91200601 01 00 4	IV
«Պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված սալիկներ»	39901200 01 00 4	IV

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

«Ասֆալտի և ասալտբետոնի խառնուրդի մնացորդներ»	31401200 01 00 4	IV
«Կարծր տեսքով բիտում և ասֆլատ»	31403502 01 00 4	IV
«Կնցադային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»	91200400 01 00 4	IV
«Սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ»	54101100 02 03 3	III
«Բանեցված շարժիչի յուղերի թափոններ»	54100201 02 03 3	III

108. Ապամոնտաժումից առաջացած շին թափոնների կառավարումը (բացառությամբ փայտանյութի) կիրականացվի ՀՀ կառավարության N 30 արձանագրային որոշման համաձայն, այն է կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր (Ն2391-Ա, 2016թ. հունիսի 30):

109. Ապամոնտաժման ընթացքում գոյացած «Շինարարության փայտանյութի թափոնները» գնահատվում են երկրորդային օգտագործման համար պիտանի: Վերջիններս կվերամշակվեն և կօգտագործվեն որպես երկրորդային հումք կապալառուի կողմից այլ շին աշխատանքներում: Այլ նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ, դռներ, պատուհաններ, խողովակներ և այլն), որոնք կառաջանան ապամոնտաժման ընթացքում կտեսակավորվեն և նույնպես կօգտագործվեն որպես երկրորդային հումք՝ այլ շինմոնտաժային աշխատանքներում:

110. Ընդհանուր առմամբ ապամոնտաժման աշխատանքների արդյունքում կգոյանա շուրջ 207.70 խ.մ շինարարական աղբ, իսկ դպրոցի շենքի կառուցման աշխատանքներից 2250 խ.մ շին աղբ/ավելորդ գրունտ:

111. Գործունեության ընթացքում գոյացած կենցաղային աղբը (գնահատվում է ≤ 5 կգ/օր) կհավաքվի հրապարակում տեղադրվող կենցաղային աղբի համար նախատեսվող տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ:

112. Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուրերի բանեցված մնացորդները (գնահատվում են ≤ 25 լ) կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

113. Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական շարժական մեքենասարքավորումների վառելիքի լիցքավորումը և քսայուղման գործողությունները հնարավորինս կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի նվազեցվի հրապարակում հեղուկ նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը և կրճատվեն/կառավարվեն հեղուկ թափոնների մնացորդային քանակները:

114. Թափոնների կառավարման միջոցառումների համալիր ցանկը բերված է *Աղյուսակ 4. -ն չ է* (6. Ենթաբաժին, «Թափոն ն երի և նյութերի կառավարման պլան»):

6.1.5 Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ

115. Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություն տարածքում առկա բուսահողի (առկա է միայն կանաչ գոտիներում) վրա չի գնահատվում, քանի որ շինաշխատանքներն իրականացվելու են տեղամասի արդեն իսկ յուրացված (գոյություն ունեցող մասնաշենքերի և ազատ գոտիների) հատվածներում:

116. Շինարարական աշխատանքների ընթացքում կբացառվեն պահպանվող ծառուղիների հատվածում առկա բուսահողի վրա այլ անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են՝ շինաղբի տեղադրում կամ կեղտաջրերի հեռացում և այլն: Բուսահողի պահպանման միջոցառումները առավել մանրամասն նկարագրված են բնապահպանական

միջոցառումների ծրագրում *Աղյուսակ 4. -ում (2. Ենթաբաժին, «Շրջակա միջավայրի պահպանության պլան» 'Բուսահողի պահպանում և կառավարում):*

117. Հրապարակում քայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մատաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի հնարավոր աղտոտման ռիսկերը:

118. Նախատեսվող գործունեության ընթացքում ինչպես նշեց 113 պարագրաֆում մեքենասարքավորումների լիզավորումը, քայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հնարավորինս կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը:

6.1.6 Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումներ

119. Ներկայացվող գործունեության ընթացքում ազդեցության ենթարկվող ծառերի թիվը գնահատվում 56: Թվով 22 ծառ նախատեսվում է հատել՝ հաշվի առնելով ծառերի կենսունակությունը և սանիտարական վիճակը, ինչպես նաև գոյություն ունեցող դպրոցի մասնաշենքերի անմիջապես հարևանությամբ աճելու հանգամանքը, ինչը խոչընդոտ է ներկայացնում դպրոցի նոր շենքի և գոյություն ունեցող մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքների կազմակերպմանը, իսկ թվով 34 ծառեր՝ կվերատնկվեն:

120. Ծառերի վերատնկման աշխատանքները կիրականացվեն գարնանային/աշնանային տնկարկի ժամանակահատվածում դպրոցի տնօրինության, շինարար-կապալառուի և Աջափնյակ վարաչական շրջանի թաղապետարանի հետ համատեղ ջանքերով: Վերատնկման աշխատանքներից առաջ նախապես կիրականացվի ծառերի էտում և փոսորակների մշակման գործողությունները, կիրականացվի նաև վերատնկվող ծառերի հաշվառում/ինվենտարիզացիա: Վերատնկված ծառեր կենսունակության մշտադիտարկումներ և ծառերի հետագա խնամքը կիրականացվի դպրոցի տնօրինության և շինարար-կապալառուի կողմից շին-գործողությունների ժամանակաշրջանում:

121. Դպրոցի տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման աշխատանքների շրջանակում տարածքի վերականգնման և բարեկարգման աշխատանքների փուլում կտնկվեն թվով 69 արժեքավոր ծառատեսակներ: Աշխատանքների ամբողջ շրջանակը ներկայացված է 4.2 ենթաբաժնում և համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ:
122. Նորատունկ բուսականության խնամքը՝ Ծրագրի հետ-շինարարական փուլից սկսած, կհանձնվի դպրոցի տնօրինությանը, իսկ բուսականության վիճակի մշտադիտարկումները կիրականացվեն Ծրագրի պատվիրատուի կողմից՝ ըստ հաստատված մոնիտորինգային պլանի:
123. Ծրագրի շրջանակում գործող հետ-շինարարական մոնիտորինգը սահմանվում է *մեկ տարի*, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:
124. Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է լրացուցիչ 216 խ. մ բունահողի մատակարարում, ինչը կկատարվի ՀՀ գործող կարգավորումների համաձայն, առաջարկվում է բուսահողի ձեռք բերումն իրականացնել մասնագիտացված ընկերությունից՝ պայմանագրային հիմունքներով, և/կամ Երևանի քաղաքապետարանի բուսահողի պահոցից:
125. Նորաստեղծ կանաչ գոտո ոռոգումը կիրականացվի նախագծվող ոռոգման ցանցի միջոցով (տես 4.2 ենթաբաժին, պարագրաֆ 46):
126. Շինարարության ընթացքում բուսականության պահպանության միջոցառումների համալիր ցանկը բերված է Աղյուսակ 4. -ում (տես 2 ենթաբաժին, «Շրջակա միջավայրի պահպանության պլան»՝ *Բուսականության պահպանում և կառավարում*):

6.1.7 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը

127. Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները

մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի, մասնավորապես՝ ժամը 14:00-ից 18:00 և կից դպրոցների (թիվ 138 և թիվ 109 դպրոցներ) դասերի ավարտից հետո: Գործունեության ընթացքում կվերահսկվեն նաև շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով և որ ժամանակին վերացվեն սարքավորումների անսարքությունները, իսկ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

128. Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացատրվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են *Աղյուսակ 4. -ում (1. ենթաբաժին, «Աշխատանքի և առողջության ապահովման պլան»)*, մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպման պայմանները, բարձրության վրա (≥ 3 մ) աշխատելիս կիրականացվեն անվտանգության միջոցառումներ և այլն:

6.1.8 Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները

129. Գործունեության ընթացքում կանխատեսվում են շինարարական մեքենա-սարքավորումների շարժով պայմանավորված երթևեկության ծանրաբեռնվածություններ: Նշված ազդեցությունները կմեղմացվեն շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժը կազմակերպելով շարասյուներով, սահմանափակ արագությամբ (≤ 30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի դեպքում՝ կկազմակերպվի նվազագույնը 30 րոպե ինտերվալով: Ինչպես նաև կիրականցվեն/կապահովվեն հետիոտնային անցուղիները շինհրապարակի հարևանությամբ, հետիոտնային և շինմեքենաների երթևեկության առաջարկվող ուղղությունները հաշվի են առնված

հրապարակի կազմակերպման պլանում:

130. Հրապարակը լքելիս կիրականացվի մեքենաների անվադողերի լվացման և մաքրման միջոցառումներ, որպեսզի բացառվի հանրային ճանապարհների վրա ցեխի և փոշու տարածման ռիսկերը: Նշված ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 4. -ում* (4. ենթաբաժին, «Երթևեկում և մոտեցման ճանապարհներին կառավարման պլան»):

6.1.9 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

131. Ծրագիրը մեծ անդրադարձ է կատարում հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին շինհրապարակում, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

132. Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոններ/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲՄԾ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (տես Աղ. 4, ԲՄԾ):

6.1.10 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

133. Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում

- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

134. Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և դեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:
- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում
- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:
- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

135. Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1 Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

136. Ներկայացվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին կապահովվի դպրոցի կառուցման ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, նախաշինարարություն, շինարարություն և շահագործում) բնապահպանական միջոցառումների ծրագրի (ԲՄԾ) ակտիվ և արդյունավետ իրականացմամբ: ԲՄԾ-ի պատշաճ մակարդակով իրականացումը կկանխարգելի և/կամ կնվազեցնի գործունեության ընթացքում կանխատեսվող անցանկալի բացասական ազդեցությունները և ռիսկերը շրջակա միջավայրի վրա:

137. ԲՄԾ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական շինարար կապալառուն պատասխանատու է լինելու ԲՄԾ-ի իրականացման համար:

138. Նախատեսվող գործունեության շրջանակում մշակված ԲՄԾ-են ներկայացված է Աղյուսակ. 4-ում: Ծրագրի շրջանակում կանախատեսվող հիմնական բացասական ազդեցությունների մեղմացմանը և/կամ բացառմանն ուղղված շրջակա միջավայրի պահպանման, աշխատանքի և առողջության ապահովմանն ուղղված *հիմնական* միջոցառումները ծրագրի իրականացման բոլոր փուլերի համար ամփոփ բերվում են ստորև.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

- շինարական աղբի կանանոնավոր հեռացում քաղաքային աղբավայր, իսկ երկրորդային թափոնները կտեսակավերվեն և կվերաօգտագործվեն կապալառուի կողմից այլ աշխատանքներում
- հրապարակում կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամանների տեղադրում, և թափոնների ժամանակին հեռացում հասարակական աղբաման՝ պահպանելով հրապարակի մաքրությունը
- կիրականցվի շինարարական հրապարակի ջրցանում և կկառավարվեն փոշու արտանետումները ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում, ինչպես նաև հրապարակը լքելիս կիրականցվեն մեքենաների անիվների լվացման/մաքրման միջոցառումներ
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին և դպրոցի դասերի ավարտից հետո՝ 14.00-18:00
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականցվի լիցենզավորված մատակարարից
- կիրականացվի ծառատունկ, թփապատում և սիզամարգերի ստեղծման աշխատանքներ
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի անթափանց հիմքերի (բետոնե, մետաղական կամ ավազե հիմքեր) վրա
- շինարարական նյութերի ձեռք բերում կիրականացվի լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ Երևան քաղաքին մոտակա հանգույցներից
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կտեղադրվեն հրապարակի տեսանելի վայրերում
- կիրականացվեն շինարարակն հրապարակում աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

կապահովվի սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտներով և այլն պաշտպանիչ միջոցներով

- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում
- տարածքի վերականգնում՝ հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ ըստ մշակված և համաձայնեցված նախագծի:

139. Ենթածրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) հաշվարկվում է **13 388.26** հազ. ՀՀ դրամ (*Աղ. 3*): Նշված արժեքը ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, իսկ շինարարության փուլում՝ շինարարական աղբի հեռացման, բուսահողի մատակարարման, ինչպես նաև կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված նախագծի ծավալաթերթերում: ԲՄԾ-ում ներկայացված մնացած միջոցառումները շինարար կապալառուն կիրականացնի ենթածրագրի շրջանակում նախատեսվող օժանդակ ծախսերի գումարից:

Աղ. 3 Մեղմացնող միջոցառումների ուղիղ (հարկերը հաշվի չեն առնված) արժեքները:

Մեղմացնող միջոցառումը	Միավորը	Ծավալը/ Ցուցանիշը	Գումարային արժեքը, հազ. ՀՀ դրամ	Ժամանակացույցը
<i>Շին աղբի (ապամոնտաժման գործողություններ) տեղափոխում</i>	խ. մ	207.70	1278.76	<i>Շինարարության փուլ</i>
<i>Շին աղբ/ավելորդ գրունտ (կառուցման աշխատանքներ) տեղափոխում</i>	խ. մ	2250	9267.84	<i>Շինարարության փուլ</i>
<i>բուսահողի մատակարարում (ներառյալ փոման և հարթեցման աշխատանքները)</i>	խ. մ	216	786.08	<i>Շինարարության փուլ/բարեկարգում</i>
<i>ծառերի տնկում՝ ներառյալ վերատնկման գործողություններ</i>	հ ստ	69+34	729.94	<i>Շինարարության փուլ/բարեկարգում</i>

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

սիզամարգերի ստեղծում (ներառյալ ցանման աշխատանքներ)	ք. մ	1446. 8	1012.44	շինարարության փուլ/բարեկարգում
թփապատում	գ. մ	100	313.20	շինարարության փուլ/բարեկարգում բարեկարգում
Ընդամենը՝ հազ. ՀՀ դրամ	13 388.26			

6.2 Մոնիտորինգ

140. Ծրագրի պատվիրատուն կանոնավոր մոնիտորինգ է իրականացնելու, որպեսզի վերահսկի ԲՄԾ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը: Մշակված մոնիտորինգի պլանը ներկայացվում է Հավելված 11.-ում:

141. Միջոցառումների իրականացման ամենօրյա վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են ՔԿ-ին նկատված անհամապատասխանությունների մասին:

Աղ. 4 *Բն ապահ պան աղ ան մի ջ ոց առ ու մ ն էր հ ծր ազ հր*

Մեղմացնող միջոցառումներ			
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈԻԼ			
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն	Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացում և դրական եղրակացության ձեռք բերում:	– Մշակել նախագծվող դպրոցի կառուցման գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցության նախնական գնահատման հայտը և ներկայացնել ՀՀ ՇՄՆ պետական փորձաքննության, ձեռք բերել փորձաքննական եզրակացություն:	«Կարոշիննախագիծ» ՍՊԸ
2. Հանրային լսումներ և հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են ազդել դպրոցի կառուցման գործունեության ժամկետների վրա:	– Նախագծվող դպրոցի և կառուցման գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը իրականացվել է Երևան քաղաքի թիվ 109 դպ.-ի շենքում սույն թվականի հունիսի 09-ին: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 23/05/2020 համարում: – Երկրորդ հանրային քննարկումը տեղի կունենա ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող պետական փորձաքննության շրջանակում:	«Կարոշիննախագիծ» ՍՊԸ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԻԼ (ԱՂԱՄՈՆՏՆԺՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ)			
1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան			
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	Դպրոցի կառուցման գործընթացի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շին առարկաների ոչ ճիշտ դասավորվածությունը և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումը կարող են առաջացնել աշխատանքի և առողջության	– Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: – Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար, մասնավորապես տարածքի ցանկապատում, ստեղծել պահակակետեր, տեղադրել	Կապալառու Կապալառու

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

	անվտանգության խնդիրներ:	ցուցանակներ, արգելող պաստառներ այլ: – Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում: – Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում: – Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով: – Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՔԿ-ին: – Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման իրադարձությունը պատշաճ պետք է գրանցել գրանցամատյանում: – Բարձրության (≥3 մ) վրա աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է իրականացնել անվտանգության միջոցառումներ անվտանգության ձողեր, տեսանելիության ժապավեն և այլն: – Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:	Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
2. Շրջակա միջավայրի պահպանության պլան			
5. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները՝ պամոնտաժման և կառուցման աշխատանքներ, շինանյութերի և շինաղբի փոխադրումներ, և այլն:	– Փոշու և այլ ծխագազերի արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուման հետևանքով,	• Մթնոլորտային օդի աղտոտման և փոշու կառավարում – Անհրաժեշտ է շինհրապարակում պարբերաբար իրականացնել ջրցանման և փոշենստեցման միջոցառումներ: – Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և սորուն նյութերը	Կապալառու
			Կապալառու

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

	ապամոնտաժման գործողություններից: – Աղմուկի թրթռումների մակարդակի աճ չին աշխատանքների ընթացում:	պահել պատասխաններով ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումը բացառելու համար: – Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը: • Աղմուկի և թրթռումների կառավարում – Շին հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին: – Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողությունների ընթացքում մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակալիքների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը: – Աղմուկ առաջացնող գործողություններն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին և դպրոցի դասերի ավարտից հետո 14:00-18:00: – Բոլոր մեքենա-սարքավորումները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: – Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքինության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից: – Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակներում: – Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-քով, այդ թվում՝ ականջակալներով: • Բուսականության պահպանում և կառավարում	Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու
--	--	--	--

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

	– Տարածքում աճող բուսականության վրա ազդեցություն, մասնավորապես նախատեսվում է իրականացնել 34 ծառերի վերատնկման աշխատանքներ:	– Անհրաժեշտ է տարածքում առկա բուսականությունը պաշտպանել շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից: – Ըստ անհրաժեշտության իրականացնել ազդեցության ենթարկվող բուսականության պաստառապատում, ջրցանում՝ փոշու տարածքում և ազդեցությունները նվազեցնելու նպատակով: – Անհրաժեշտ է ապահովել տարածքում բուսականության ոռոգման միջոցառումները շին աշխատանքների ընթացքում: – Անհրաժեշտ է իրականացնել միայն դպրոցի նախագծով ազդեցության ենթակա ծառերի (22 հատ ծառ) հատման գործողությունները և խուսափել տարածքում պահպանվող որևէ ծառի և թփերի հատումից՝ խստորեն հետևելով մշակված կանաչապատման/բարեկարգման աշխատանքների նախագծին: – Անհրաժեշտ է իրականացնել նախատեսվող ծառերի (34 հատ ծառեր) վերատնկման աշխատանքները գարնանային/աշնանային տնկարկի ժամանակահատվածում, դպրոցի տնօրինության և շինարար-կապալառուի համատեղ ջանքերով: – Վերատնկման աշխատանքներից առաջ նախապես իրականացնել ծառերի էտում և փոսորակների մշակման գործողությունները: – Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել վերատնկված ծառերի ոռոգման/ջրման և խնամքի միջոցառումները: • Բուսահողի պահպանում և կառավարում – Հնարավորինս բացառել տարածքում առկա բուսահողի, ներառյալ պահպանվող ծառերի հատվածում առկա բուսահողի վրա ազդեցությունները (շինթափոնների և կեղտաջրերի տարածում): – Անհրաժեշտ է հրապարակում պահել կեղտաջրերի հեռացման համար նախատեսված (>5 խ.մ)	Կապալառու Կապալառու Կապալառու/դպրոցի տնօրինություն Կապալառու Կապալառու Կապալառու, Աջափնյակի թաղապետարան, դպրոց Դպրոց/կապալառու Կապալառու Կապալառու
	– Տարածքի կանաչ գոտիներում առկա բուսահողի վրա ազդեցություն		

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67	68	69	70	71	72	73	74	75	76	77	78	79	80	81	82	83	84	85	86	87	88	89	90	91	92	93	94	95	96	97	98	99	100	101	102	103	104	105	106	107	108	109	110	111	112	113	114	115	116	117	118	119	120	121	122	123	124	125	126	127	128	129	130	131	132	133	134	135	136	137	138	139	140	141	142	143	144	145	146	147	148	149	150	151	152	153	154	155	156	157	158	159	160	161	162	163	164	165	166	167	168	169	170	171	172	173	174	175	176	177	178	179	180	181	182	183	184	185	186	187	188	189	190	191	192	193	194	195	196	197	198	199	200	201	202	203	204	205	206	207	208	209	210	211	212	213	214	215	216	217	218	219	220	221	222	223	224	225	226	227	228	229	230	231	232	233	234	235	236	237	238	239	240	241	242	243	244	245	246	247	248	249	250	251	252	253	254	255	256	257	258	259	260	261	262	263	264	265	266	267	268	269	270	271	272	273	274	275	276	277	278	279	280	281	282	283	284	285	286	287	288	289	290	291	292	293	294	295	296	297	298	299	300	301	302	303	304	305	306	307	308	309	310	311	312	313	314	315	316	317	318	319	320	321	322	323	324	325	326	327	328	329	330	331	332	333	334	335	336	337	338	339	340	341	342	343	344	345	346	347	348	349	350	351	352	353	354	355	356	357	358	359	360	361	362	363	364	365	366	367	368	369	370	371	372	373	374	375	376	377	378	379	380	381	382	383	384	385	386	387	388	389	390	391	392	393	394	395	396	397	398	399	400	401	402	403	404	405	406	407	408	409	410	411	412	413	414	415	416	417	418	419	420	421	422	423	424	425	426	427	428	429	430	431	432	433	434	435	436	437	438	439	440	441	442	443	444	445	446	447	448	449	450	451	452	453	454	455	456	457	458	459	460	461	462	463	464	465	466	467	468	469	470	471	472	473	474	475	476	477	478	479	480	481	482	483	484	485	486	487	488	489	490	491	492	493	494	495	496	497	498	499	500	501	502	503	504	505	506	507	508	509	510	511	512	513	514	515	516	517	518	519	520	521	522	523	524	5
---	---	---	---	---	---	---	---	---	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	---

		տառաչ, հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:	
3. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան			
7.	Շին հրապարակի կազմակերպում:	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա: - Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես դայրոցի տարածքի ներսում՝ բացառելով այլ ազակակիր տարածքների օգտագործումն առանց համապատասխան թույլտվության: - Անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակը հրապարակի կազմակերպման սխեմային համաձայն՝ ապահովելով նախատեսվող մուտքերը և ելքը: - Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր անթափանցելի ցանկապատում ողջ շին-հրապարակի պարագծով: - Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում: - Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով: Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու	
4. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան			
8.	Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ	- Երթևեկության խափանումներ - Երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ - հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում - շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնասի պատճառում - Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով: - Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով: - Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ: - Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը օրելիս: Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու	

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

		- Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի արդյունավետ կլանիչներով և խլացուցիչներով: - Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար: - Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով: - Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվտանգություն մաքրելու միջոցառումներով (աշխատանքային տեղամասում կոպակային մակերևույթների և անիվների վազման միջոցառումներ) շինարարական փոշին ու ցեխի տարածումը կանխելու համար:	Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
5. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան			
9. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակներ, դժբախտ պատահարներ և այլն	- Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ և շրջակա միջավայր:	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում: - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը: - Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրում: - Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին: - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած	Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

		հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար: – Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան: – Քիմիական և այլ, վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/ անթափանց հատակով և պատնեշով: – Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը: – Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՔԿ-ին հաշվետվության ձևով:	Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
6. Թափոնների և նյութերի կառավարման պլան			
10. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	- Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ, բուսահող ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք պոտենցիալ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար:	– Անհրաժեշտ է շինարարական աղբը հեռացնել բացառապես Երևանի քաղաքապետարանի թույլատրված աղբավայր: – Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթնեկության խոչընդոտները կանխելու համար: – Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր դրանց առաջացման դեպքում: – Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում: – Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:	Կապալառու
			Կապալառու
			Կապալառու

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

		- Հրապարակում նախատեսել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսված աղբաման, իսկ այնուհետև հավաքված աղբը հեռացնել հասարակական աղբաման: - Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինարարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով: - Անհրաժեշտ է հրապարակում պահել կեղտաջրերի (բետոնաջուր, և այլն) հեռացման համար նախատեսված (≥ 5 խ.մ) տարա, որտեղ նստվածքի մեխանիկական նստեցումից հետո ջուրը հնարավոր կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ ջրի գոլորշացումից հետո նստվածքը/ջուր մնացորդը հեռացնել աղբավայր: - Հեղուկ վառելիքի կամ յուղանման նյութերի տարաները անհրաժեշտ է պահել անթափանց հիմքերի (բետոնե, մետաղական կամ ավազե) վրա՝ հողային շերտի վրա հնարավոր արտահոսքերը կառավարելու նպատակով: - Անհրաժեշտ է սպառողական հատկությունները կորցրած յուղի թափոնները հավաքել հերմետիկ տարայում, պահել հրապարակում՝ ըստ վերը նկարագրված կարգի, և հետագայում հանձնել լիցենզավորված վերամշակողի:	Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
7. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան			
11. Շինհրապարակի Վերականգնումը, դպրոցի տարածքի բարեկարգում/կանաչապատում	- Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները:	- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն: - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները: - Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը: - Անհրաժեշտ է իրականացնել ՔԿ-ի կողմից մշակված ընդունման-	Կապալառու
			Կապալառու
			Կապալառու
			Կապալառու


Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

		հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները: - Անհրաժեշտ է կատարել բարեկարգման աշխատանքները համաձայն նախագծի բարեկարգման կանաչապատման և համաձայն: պլանի	Կապալառու
ՀԵՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԻՆ			
12. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	- Անհրաժեշտ է ապահովել տնկված կանաչ զանգվածի 90% կաշողականությունը և աճը: Հակառակ դեպքում անհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ բուսատեսակները:	Կապալառու/ Դպրոցի տնօրինություն
13. Բուսականության վերականգնում	Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն	- Անհրաժեշտ է ներառել դպրոցի համար նախատեսված/տնկված բուսականությունը դպրոցի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում: - Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ:	Դպրոցի տնօրինություն

7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

142. Ներկայացվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումն իրականացվել է ա.թ. հունիսի 09-ին՝ ժամը 16:00-ին Երևանի թիվ 109 ավագ դպրոցի շենքում (Աջափնյակ վարչական շրջան, Մարգարյան փողոց, 2-րդ նրբանցք, 14 շենք հասցեում): Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020թ.-ի մայիսի 23-ի համարում հանրային ծանուցման գործող ընթացակարգին համաձայն այն է՝ քննարկումն անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ: Հանրային քննարկման մասին հայտարարությունը և նախագծային փաստաթղթերը տեղադրվել են Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում՝ <https://www.yerevan.am>:

Նկ . 5 Հանրային քննարկման մասին հայտարարումը և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 23.05.2020թ համարում::



143. Հանրային քննարկմանը ներկա են գտնվել բոլոր շահագրգիռ և ազդակակիր կողմերը, ներառյալ ներկայացուցիչներ դպրոցը նախագծող ընկերություններից,

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

աշխատակիցներ դպրոցից, ներկայացուցիչներ Երևանի քաղաքապետարանից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից (Նկ . 6):

Նկ . 6 Հանրային քննարկում, 09 հունիս 2020 թվական:




144. Քննարկմանը ներկա մասնակիցների ընդլայնված ցանկը (2 էջ) ներկայացվում է Հավելված 12. -ում, իսկ քննարկման արձանագրությունը և տեսաձայնագրությունը կներկայացվեն փորձաքննության ներկայացվող սույն հայտին կից:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
2. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР 1984, Москва.
3. ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
4. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:

[illegible]


9.3 Հավելված 3. Երկրորդ հարկի հատակագիծը



9.4 Հավելված 4. Երրորդ հարկի հատակագիծը



9.5 Հավելված 5. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան



9.7 Հավելված 7. Անշարժ գույքի սեփականության վկայական


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՑԱԿԱՆ
ՄԵՆԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍՄԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «30» Օգոստոսի 2013 թվականին զուգի նկատմամբ իրազեկման իրավունքի պետական գրանցման վիճակում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրազեկման պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՍՈՒՐՅԵԿՏ ՈՒՆԸ
Երևանի հ. 109 անվան դպրոցի դրոշմ

2. ՄԵՆԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԱՎԵՐՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՄԿԱՎՈՐՈՒՄ
Երևան, Աջախյանի Մարզադաշտի փողոց 2 կետակցի հ. 14

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀՆԵՂԻՍԱՅԱԾ ՓԱՏԱՍԹՂԵՐԸ
Միատույն օգտագործման պայմանագիր 21/08/2013թ. հ. 7015

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԼՈՒՅԱԳՐԵՐԸ
Կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0210-0003
Մակերեսի չափը (մա)՝ 0.80132

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրազեկման տեսակը՝ ՄԼՀՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Վկայական N 30082013-01-0097 Էջ 1

5. ԸՆԴՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ԲԼՈՒՅԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական
2) Բնութագրող ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրազեկման տեսակը
1	01-001-0210-0003-002	Գլխից	1271 ք.մ.	ՄԼՀՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
2	01-001-0210-0003-003	Ցայրանց	2140.5 ք.մ.	ՄԼՀՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
3	01-001-0210-0003-004	Ցայրանց	3358.2 ք.մ.	ՄԼՀՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Լրացրուցիչ կշռմանը և տեղեկություններ
Միատույն օգտագործման է տրվում անժամկետ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարինե Ավետիսյան
Գրանցումը պաշտոնը՝ Երևանի ՏԻ մարզպետի գրչի տեղակալ
ՀՀ ՎԿ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը
տրամադրող սահմանում գրանցված է.

Վկայական N 30082013-01-0097 Էջ 2

9.9 Հավելված 9. Գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայման

Հաստատում եմ
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի տեղակալ
Գլխավոր ճարտարագետ

Վ. Շախարյան
«18»...12...2019թ.

ԵՁԴԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի Արտինյան վարչական շրջանի Արազպարյան փողոցի 2-րդ նորոգող թիվ 14 հասցեում
գտնվող «Երևանի No109 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ում շենքերի գազաֆիկացման
նպատակով տեղադրվելու է
1800/ժ քաղցրահամալույսային խողովակի և
խողովակաշերտի 9P ցանցի գազատարային
նպատակով տեղադրվող սինիստերը:

դրի պայմաններն են՝

> Միացվող գազատարում գազի մշտունք	1.3 - 1.7 կգ/սմ ²
> Գազատարի տրամագիծը	108 մմ
> Միացման կետը	Հատ տեխնիկական պայմանների:
> Հաշվառողի տարրը	Հատ գազատարման ծախսերի, բարձր ճշտության դասի, կանախարկված էլեկտրամայլի ճշգիշով:
> Լրացուցիչ պայմաններ	1. Գազի մշտուն կառավարչի տեղադրում: 2. Նախատեսվող արձանագրության վառելիքի մեկնույթ պաշտպան:

Հիմք՝

- Երևանի ԳԳՄ 17.12.2019թ.-ի No 22-13/3996 ընդ որում,
- Տեխնիկական պայմանագրեր:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ԳԲԸ և ՆԱԶ Ե ու Մ թափանչ պետ
 Յու. Նազարյան

Կազմող
 Վ. Շախարյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2019թ.


Ք. Երևան քաղաքի Արտինյան վարչական շրջանի Արազպարյան փողոցի 2-րդ նորոգող թիվ 14 հասցեում, 37 սենյակային տանիքում
տեղադրվող սինիստերի և խողովակաշերտի միջոցով «Երևանի No109 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ում շենքերի գազաֆիկացման
նպատակով տեղադրվելու է
1. Գազի մշտուն կառավարչի տեղադրում:
2. Նախատեսվող արձանագրության վառելիքի մեկնույթ պաշտպան:

2. Սինիստերի մատնատեղում գազի մշտունք՝ P = (1.3 - 1.7) կգ/սմ²


3. Սինիստերի ներքին «Գ» խողովակ
Որի միջոցով տեղի հողերի տնտեսությանը և անհատներին
4. Հատուկ պայմաններ:

5. ԳԲԸ-ի խողովակաշերտի միջոցով տեղադրվող
Գլխավոր տնօրենի հրավերի հիման վրա ընդունված է լինել:

6. Շենքերի գազամատակարարման վերանայում (Նախագծային/Նախագծային/Նախագծային) գնահատվող:



7. Տեխնիկական պայմանագրերի հիման վրա
Երևանի ԳԳՄ 17.12.2019թ.-ի No 22-13/3996 ընդ որում
Տեխնիկական պայմանագրեր:

ԳԲԸ և ՆԱԶ Ե ու Մ թափանչ պետ
 Յու. Նազարյան

Կազմող
 Վ. Շախարյան

9.10 Հավելված 10. Էլեկտրասնուցման տեխնիկական պայմանի գրություն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ

ԳՂ, ք. Երևան, 0047, Ա. Արմենյան 127, հեռ.՝ +374 (11) 59 12 01, +374 (11) 59 12 00

№ 05-79-02/28
29» 01» 20
ՇՈ՝ _____

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
գլխավոր քարտուղար
Պարոն Ա. Սկրտչյանին

Հարգելի պարոն Սկրտչյան,

Ռչպես արդեն նշել ենք մեր հախաբո գրություններում ք. Երևան, Մարգարյան 2-րդ երեսնք № 4 հասցեում գտնվող № 109 դպրոցի բակում տեղակայված ՏԵ-0809 ենթակայանը, որպես <<ՀԷՑ>> ՓԲ ընկերության հաշվեկշռում գտնվող էներգետիկ տեղակայանք համապատասխանում է անվտանգության տեխնիկայի և շահագործման կանոններին:

Ինչ վերաբերվում է Ձեր կողմից բարձրացված այն հարցին, որ դպրոցի մեկտրոն տեղափոխելուց հետո ենթակայանի մուտքը կհարուցի բնակիչ-հպտվածում, ինչի կապակցությամբ էլ հայտնել եք մտահոգություն հետագա անվտանգ շահագործման վերաբերյալ, նշենք որ նմանատիպ խնդիրներից խուսափելու համար շինարարական նախագծերը, որպես կանոն, նախապես, համաձայնեցվում են <<ՀԷՑ>> ՓԲ ընկերության հետ, ինչը այս պարագայում չի իրականացվել: Ուստի արձանագրելով արդեն իսկ ստեղծված իրավիճակը տեղեկացնում եմ, որ <<ՀԷՑ>> ՓԲ ընկերությունը չի առարկում տեղափոխել ՏԵ-0809 ենթակայանը, կախաձևեռող կնդմի ֆինանսատական միջոցների հաշվին և անհրաժեշտ հողատեղացման նպատակով:

Նախարար՝ Պ. Սահակյան
ՇՈՒ. 59-12-65

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»
28.1774-28.27
04. 02. 2020

Պ. Սահակյան

9.11 Հավելված 11. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան

Մոնիտորինգ						
Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԼ						
1. Աշխատանք ունենալու հնարավորություններ	Աշխատուժը համալրված է տեղացի բնակիչներից, կանանցից և ցածր որակավորում ունեցող աշխատողներից	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապալառուի կողմից աշխատատեղեր, նախատեսված են տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	ՔԿ ՎԽ	Կսահմանվի Կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացիոն փուլում
2. Հանրային լսումներ և կապը հանրության հետ	Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազդակիր կողմերի տեղեկացվածություն Ծրագրի վերաբերյալ	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր Հանրային լսումներ Բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին/առաջարկու թյունները հասցեագրվել են բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան	ՔԿ	Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: Բողոքների մոնիտորինգ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Տարածքի մաքրում բուսականությունից	Տարածքի մաքրումը բուսականությունից համապատասխանում է ԲՄԾ-ին Շինհրապարակի	Շինարարական տեղամաս	Տարածքի բուսականությունից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում	Հատված թփերի գրանցամատյանը առկա է	ՔԿ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

	մերձակայքի բուսականությունը պաշտպանված է:		Շին. հրապարակի ստուգայցեր			
4. Երջակա միջավայրի պահպանություն	Նստվածքների առաջացում Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	Շին տեղամաս և շինհրապարակից 50 մ հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ	Ակնադիտական ստուգումներ շինհրապարակի ստուգայցերի միջոցով: Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում: Փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը: Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում:	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	Փաստաթղթերի ստուգում: Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի գտնվելու վայրը և հատակագիծը համապատասխանում են պետ մարմինների կողմից թույլատրվածին և Տարածքի կառավարման պլանին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը: Դպրոցին և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը Ճանապարհներին և այլ կառույցներին հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում, սարքավորումներ ի և Նյութերի տեղափոխության համար: Շինհրապարակի մոտեցման մուտքերը	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

Երևանի թիվ 109 ավագ դպրոցի կառուցում

7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևի վարում: Պատահարները կառավարվում են Արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
8. Թափոնների և շին. նյութերի կառավարում	Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում: Շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր կատարած ստուգայցեր:	Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:		
9. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	Շինհրապարակը մաքրված է, նույնը և թափոնները հեռացված են: Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են: Շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Շինարարական տեղամաս	Շինհրապարակի վերա-կանգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին: Ապահովված է թփերի 90% կայողականությունը:	ՔԿ ՎԽ	
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈԽ						
11.Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կանաչապատման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	ՔԿ, Դպրոցի տնօրինություն	

